



Այսօր Տափերականի մանկապարտեզը հերթական սերունդը ճանապարհեց դպրոց. տեղի ունեցավ ավագ խմբի ավարտական հանդեսը: Այն ապացուցեց որ երեխաները մանկապարտեզում շատ լավ դաստիարակություն են ստացել և ավելի հստակ քայլերով գնում են դպրոց: Երեխաները շատ գեղեցիկ բանաստեղծություններով դաստիարակներ ընկեր Կարինեի և Անիի գլխավորությամբ շնորհակալություն հայտնեցին իրենց շատ սիրելի մանկապարտեզի անձնակազմին: Միջոցառման ավարտին Տափերականի համայնքապետարանի կողմից երեխաները ստեցան նվեր պայուսակներ:

Շնորհավորում ենք բոլոր երեխաներին և ցանկանում բազմաթիվ ձեռքբերումներ և անհոգ մանկություն և հաջող ուսումնական տարի:







